Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՃ-3 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2024թթ. |
| Ներկայացման օր | 04.10.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 1 դեպք սոցիալական նպաստ համակարգում վերափաստագրման, ապա եռամսյակային հրատապ օգնության համար դիմումի գործընթացի կազմակերպում սոցիալական նպաստ համակարգում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 11 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 16 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 6 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 27 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին՝
    - ✓ Կինեզոլոգիա,
    - ✓ Հմուտ ձեռքեր,
    - ✓ Երգ,
    - ✓ Պարաթերապիա,
    - ✓ Խոհարարական,
    - ✓ Ձեռքի աշխատանք,
    - ✓ Քննարկումների ակումբ,
    - ✓ Առողջապահական:
    - ✓ Գրական
  - Ճաշարանի 35 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - Էքսկուրսիա՝ Մուղնու Սբ.Գևորգ եկեղեցի, Ծաղկևանք, Դրոյի գերեզման, Ապարանի տառերի պուրակ,
    - Էքսկուրսիա՝ Առինջի Լևոնի Աստվածածին քարանձավ, Առինջի Գետարգելի եկեղեցի, Գ.Ծառուկյանի Սբ.Հովհաննես եկեղեցի, Պողոս-Պետրոս, Ջրվեժի Սբ.Կաթողիկե եկեղեցի,
    - Էքսկուրսիա՝ Սևանա լիճ, Հայրավանք, վանական համալիր,
    - Էքսկուրսիա՝ Լոռի, Վանաձորի Սբ.Ամենակատար եկեղեցի, Ստեփանավան, Դենդրոպարկ, Ջրաշուշանների լիճ, Սբ.Նիկոլայ եկեղեցի,
    - Ցուցահանդես-միջոցառում «Հմուտ ձեռքեր»,
    - Էքսկուրսիա՝ Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք,
    - Էքսկուրսիա՝ Նորավանք, Գնդեվանք, Ջերմուկ,
    - Էքսկուրսիա՝ Սևան, Նորատուս, խաչքարեր, Հայրիվանք, Գ.Բերկունքի լողափ,
    - Ծննդյան տարեդարձի նշում,
    - Նվիրված Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնին,
    - Էքսկուրսիա՝ Թալինի Սուրբ Կաթողիկե եկեղեցի, Դաշտադեմ ամրոց,
    - Արամ խաչատրյան համերգասրահ, կինոերաժշտություններ ազգային հնչյուններով:
    - Ա.խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ:

- Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, «Եկեք անկեղծ խոսենք» ներկայացման դիտում:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ: Երևանյան 16-րդ միջազգային երաժշտության փառատոնի բացման համերգը: :
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Արմենիա» միջազգային փառատոնի հերթական համերգը:

  - 13 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Էքսկուրսիա՝ Մուղնու Սբ.Գևորգ եկեղեցի, Ծաղկեվանք, Դրոյի գերեզման, Ապարանի տառերի պուրակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/2003977693387950 ),
- Էքսկուրսիա՝ Սևանա լիճ, Հայրավանք, վանական համալիր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/8316377148456205 ),
- Էքսկուրսիա՝ Լոռի, Վանաձորի Սբ.Ամենակատար եկեղեցի, Ստեփանավան, Դենդրոպարկ, Ջրաշուշանների լիճ, Սբ.Նիկոլայ եկեղեցի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1220197519214602 ),
- Էքսկուրսիա՝ Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/490531323896284 ),
- Էքսկուրսիա՝ Նորավանք, Գնդեվանք, Ջերմուկ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1976892699416497 ),
- Նվիրված Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid07f3PpRdQfKseaMV9Q5andGKSdJ5mmRHTffBDtctNMi7ZaxRdEwifa7YD38x9KdjJl&id=100081543423963),
- Հանդիպում քահանայի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0wSU4gmBDje6EF9JEoerTRa6HCiGCX4noE8VNcUpFF7qQdDdhFM1tXyEU22e7KhN4l&id=100081543423963 ),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար**:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

Թիմի գրեթե բոլոր անդամները՝ սոցիալական աշխատողները, բուժքույրերը, մասնակցել են Եվրոխորհուրդի գրասենյակի կողմից կազմակերպած դասընթացին. «Սթրեսի կառավարում» թեմայով:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 64 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 38 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 21 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 8 |
| | 40-65 տարեկան | 30 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 62 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 113 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում<br>Հոգեբանական ծառայություն<br>Բաղնիքի ծառայությունից | 35<br>16<br>13 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «04» 10.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)